ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Արգավանդ Կահույք ՍՊԸ-ն ՁՈՒԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/02 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
8	Խոհանոցային կահույք, պատրաստված լամինացված ՓՏՍ-ից 18մմ հաստությամբ, արտաքին չափսերը՝ երկարությունը՝ 3600 մմ, բարձրությունը՝ 750մմ (բացառությամբ խողովակները ծածկելու համար նախատեսված հատվածից), խորությունը՝ 450մմ, գույնը՝ հաճարագույն, որից ստորին 100 մմ հատվածը չի հանդիսանում աշխատանքային տարածք և ծառայում է որպես ոտքի հատված: Ոտքի հատվածը դիմացից ծածկվում է լամինացված 18մմ հաստությամբ ՓՏՍ-ով, հետևից մնում է բաց: Վերևի շերտը խոհանոցային անջրանցիկ սեղանածածկ՝ 600մմ լայնության, 26 մմ հաստության, գույնը՝ բաց՝ կհամաձայնեցվի Գնորդի հետ: Բոլոր եզրերը շրջափակվում են 0.4մմ հաստության պլաստիկե եզրաժապավենով (PVC), բացառությամբ հատակին հպվող հատվածների, նույն ՓՏՍ-ի գույնի: Կահույքը նախատեսի երկտեղանի լվացարան, լվացքի մեքենայի համար հատված, էլեկտրական սալօջախի համար հատված: Կտրվածքները՝ 2 երկդռնանի հատված, որոնք ներսից բաժանված են հորիզոնական երկու հատվածի, քաշովի դարակների հատված (երեք հատ քաշովի դարակ), լվացարանի հատվածում երկդռնանի հատված՝ առանց ներքին կտրվածքների, իսկ պատին հարող հատվածը լինելու է խողովակները ծածկող հատված, որը ներսից չի ունենալու կտրվածներ, բայց փակվելու է դռներով: Պատին հարող հատվածի բարձրությունը լինելու է մինչև առաստաղ: Դռներն ամրացվում են 2-ական բարձրորակ ծխնիներով: Դռները կունենան մետաղական բռնակներ, որոնց երկարությունը կլինի 100մմ: Դռների փակման հատվածներում ամրացվում են հարվածը մեղմացնող փոքր, սիլիկոնե սահմանափակիչներ: Հետնապատը կլինի 3 մմ հաստությամբ լամինացված փայտաթելային սալից (ԴՎՊ) և նույն ՓՏՍ-ի գույնի: Միացումներն իրականացնել

	երաշխավորված և թաքնված պտուտակների միջոցով: Բաժանման շերտ հանդիսացող ՓՏՍ-ները հենվում են մետաղական հենակների (полкадержатель) վրա: Կահույքը տակից կունենա 6-մմ բարձրության պլաստիկ ոտիկներ: Ապրանքը կլինի նոր՝ չօգտագործված: Ապրանքների տեղափոխումը, բեռնաթափումը, 7-րդ հարկ բարձրացնելը, տեղադրումը իրականացվում է Վաճառողի կողմից: Երաշխիքային ժամկետ՝ առնվազն 365 օր՝ հաշված Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից Երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ եկած թերությունները Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում կշտկվի տեղում (դետալների փոխարինում) կամ ապրանքը կփոխարինվի նորով:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

АРГАВАНД МЕБЕЛЬ ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՁՈՒԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/02 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
8	